ԳԵՂԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 28.10.1963

Ծննդավայր՝ ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ

Ծնվել է 1963 թ. հոկտեմբերի 28-ին Արարատի մարզի Այնթափ գյուղում: Այնթափի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1981-1982 թթ սովորել է Երեւանի N 12 տեխնիկական ուսումնարանում: 1982-1984 թթ ծառայել է խորհրդային բանակում: 1985-1990 թթ սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: 1990 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան:

Աշխատել է որպես պատմության եւ հասարակագիտության ուսուցիչ 1990-1991 թթ Երեւանի Գ. Նարեկացու անվան N 137 միջնակարգ դպրոցում, 1992-1994 թթ Մ. Սարյանի անվան N 86 միջնակարգ դպրոցում: 1996 թ. ընդունվել է աշխատանքի ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող:

1997 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ եւ ստացել է պատմագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2006-2021 թթ

դասավանդել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Հայոց պատմության եւ փիլիսոփայության ամբիոնում: Ներկայումս աշխատում է ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 2022 թ-ից որպես հրավիրյալ դասախոս դասավանդում է ԵՊԲՀ հասարակագիտական առարկաների ամբիոնում:

Հեղինակ է 2 մենագրության եւ 45 հոդվածի **որից՝ 3 ընդգրկված են Scopus/Webofscience ՄԳՇ-ում**: ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայոց պատմություն» քառահատորյակի 3-րդ հատորի համահեղինակ է:Գ. Հովհաննիսյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի գիտաժողովներում, Հայոց բանակի զորամասերում և այլն: Գ. Հովհաննիսյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գովեստագրով և վաստակագրով:

Ամուսնացած է, ունի երկու որդի: